

Հաստատված է նոր խմբագրությամբ  
«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ  
դիտորդ խորհրդի որոշմամբ

Նոր խմբագրությամբ գրանցված է

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկում

Գլխավոր տնօրեն՝ Հայկ Եգանյան

Նախագահ՝ Արթուր Զավադյան

---

«17» հունվարի, 2019թ.  
ք. Երևան  
ՀՖԲ-01/076L

---

« \_\_ » \_\_\_\_\_ 2019թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ»**  
**ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ**  
**ԱՌԵՎՏՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ**

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

## **Գլուխ 1. Հասկացություններ**

- 1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 2) «**Լոտ**». գնման կամ վաճառքի հայտում նշվող՝ կորպորատիվ արժեթղթերի նվազագույն քանակություն: Առևտրին թույլատրված բոլոր կորպորատիվ արժեթղթերի համար մեկ Լոտը պարունակում է մեկ արժեթուղթ:
- 3) «**Հաշվարկային գին**». նախորդ առևտրային օրվա համապատասխան առևտրային նստաշրջանի ընթացքում թողարկողի տվյալ դասի կորպորատիվ արժեթղթերով կնքված վերջին գործարքի գինը: Եթե նախորդ առևտրային օրվա համապատասխան առևտրային նստաշրջանի ընթացքում թողարկողի տվյալ դասի արժեթղթերով գործարք չի կնքվել և այդ առևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ առևտրային համակարգում առկա լավագույն գնման հայտում նշված գինը հաշվարկային գնից բարձր է (լավագույն վաճառքի հայտում նշված գինը հաշվարկային գնից ցածր է), ապա այդ հայտում նշված գինն է սահմանվում որպես հաշվարկային գին տվյալ առևտրային նստաշրջանի համար: Այն դեպքում, երբ նախորդ առևտրային օրվա համապատասխան առևտրային նստաշրջանի ընթացքում թողարկողի տվյալ դասի արժեթղթերով գործարք չի կնքվել և չի ներկայացվել այնպիսի հայտ, որը հիմք կհանդիսանար հաշվարկային գին սահմանելու համար, այդ դեպքում տվյալ առևտրային նստաշրջանի համար հաշվարկային գին է համարվում նախորդ առևտրային օրվա համապատասխան առևտրային նստաշրջանի համար սահմանված հաշվարկային գինը: Այն դեպքում, երբ 5 (հինգ) հաջորդական առևտրային օրերի համապատասխան առևտրային նստաշրջանների ընթացքում գործարք չի կնքվում կամ այնպիսի հայտ չի ներկայացվում, որը հիմք կհանդիսանար հաշվարկային գին սահմանելու համար, այդ դեպքում տվյալ նստաշրջանի համար հաշվարկային գին չի սահմանվում:
- 4) «**Սպրեդ**». թողարկողի տվյալ դասի կորպորատիվ արժեթղթերի գնման (վաճառքի) լավագույն գնի և/կամ Հաշվարկային գնի նկատմամբ առևտրային համակարգ մուտքագրվող գնման (վաճառքի) հայտերի և/կամ առաջարկների գների տարբերության առավելագույն թույլատրելի սահման:
- 5) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված նշանակությունները:

## **Գլուխ 2. Կորպորատիվ արժեթղթերով գործարքների կնքումը**

- 1) Օպերատորի առևտրային համակարգում կորպորատիվ արժեթղթերով գործարքներ կարող են կնքվել բացման աճուրդի, ինչպես նաև առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում՝ Օպերատորի «Առևտրի ընդհանուր կանոններով» և սույն գլխով սահմանված կարգով: Առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում կորպորատիվ արժեթղթերով առևտուրը կազմակերպվում է երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով:
- 2) Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ նախատեսված դեպքերում Օպերատորի «Առևտրի ընդհանուր կանոններով» սահմանված կարգով կորպորատիվ արժեթղթերով կարող են կնքվել նաև հասցեական և ռեպո գործարքներ:
- 3) Բաժնետոմսերով, կորպորատիվ պարտատոմսերով (այդ թվում նաև՝ արտարժույթով արտահայտված կորպորատիվ պարտատոմսերով) առևտուրը Օպերատորը կազմակերպում է հետևյալ հարթակներում՝
  - ա) ֆոնդային բորսայի հարթակ,
  - բ) ազատ շուկայի հարթակ:

- 4) Լրիվ նախնական դեպոնացման պայմաններում կազմակերպվող՝ կորպորատիվ արժեթղթերով գործարքների կնքումն իրականացվում է սույն գլխի 5) և 6) կետերում սահմանված առանձնահատկություններով:
- 5) Շուկայի մասնակիցների կողմից Օպերատորի և Դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով կատարված լրացուցիչ դեպոնացումների դեպքում համապատասխան չափով ավելացվում են դեպոնացված կորպորատիվ արժեթղթերի և/կամ համապատասխան արժույթով արտահայտված դրամական միջոցների մնացորդները: Ժամը 10:45-ից մինչև 14:50-ը ընկած ժամանակահատվածի ընթացքում Օպերատորը 5 (հինգ) րոպե պարբերականությամբ ստուգում է Դեպոզիտարիայից ստացված տվյալների առակայության փաստը, որոնց հիման վրա առավելագույնը 5 (հինգ) րոպեի ընթացքում առևտրային համակարգում համապատասխան չափով ավելացնում է դեպոնացված կորպորատիվ արժեթղթերի և/կամ համապատասխան արժույթով արտահայտված դրամական միջոցների մնացորդները:
- 6) Առևտրի մասնակիցը կարող է իր տերմինալից (հեռացված տերմինալից) ամբողջությամբ կամ մասնակի ապադեպոնացնել Շուկայի տվյալ մասնակցի դեպոնացված կորպորատիվ արժեթղթերի և/կամ համապատասխան արժույթով արտահայտված դրամական միջոցների՝ առևտրային համակարգում տվյալ պահին առկա և ազատ (չարգելադրված) մնացորդը կամ դրա մի մասը, որի դեպքում ապադեպոնացված միջոցների չափով նվազեցվում է դեպոնացված կորպորատիվ արժեթղթերի և/կամ համապատասխան արժույթով արտահայտված դրամական միջոցների մնացորդը:
- 7) Օպերատորը կորպորատիվ արժեթղթերով կազմակերպվող առևտրի ընթացքում ժամը 10:45-ից մինչև 15:05-ը ընկած ժամանակահատվածի ընթացքում առնվազն 5 (հինգ) րոպե պարբերականությամբ ստուգում է սույն գլխի 6) կետին համապատասխան առևտրի որևէ մասնակցի կողմից առևտրային համակարգում Շուկայի տվյալ մասնակցի առկա կորպորատիվ արժեթղթերի և/կամ համապատասխան արժույթով արտահայտված դրամական միջոցների (դրանց մի մասի) ապադեպոնացում կատարելու փաստը: Ստուգման արդյունքում եթե պարզվում է, որ առևտրի որևէ մասնակցի կողմից նախորդ ստուգումից հետո կատարվել է միջոցների ապադեպոնացում, ապա Օպերատորը առավելագույնը 5 (հինգ) րոպեի ընթացքում պատրաստում և Դեպոզիտարիային է տրամադրում կատարված ապադեպոնացումների մասին տվյալները: Ժամը 15:05-ից հետո կատարված ապադեպոնացումները բացի առևտրային համակարգում դրանց մնացորդների նվազեցումից որևէ այլ հետևանք չեն առաջացնում, իսկ ապադեպոնացված համապատասխան միջոցները Շուկայի համապատասխան մասնակցի(ների) իրավասու հաշիվներին փոխանցվում են առևտրային նստաշրջանի ավարտից հետո՝ մինչև ժամը 15:30-ը:
- 8) Կորպորատիվ արժեթղթերով առևտրի ընթացքում առևտրի մասնակիցները առևտրային համակարգ հայտերը պետք է մուտքագրեն՝ նպատակ ունենալով բավարարել դրանք:
- 9) Երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով կորպորատիվ արժեթղթերով կազմակերպվող առևտրի ընթացքում առևտրային համակարգ մուտքագրվող գնման և վաճառքի հայտերը պետք է ներկայացվեն այնպիսի գնով, որը համապատասխանում է տվյալ արժեթղթի ընթացիկ շուկայական արժեքին:
- 10) Ընթացիկ շուկայական արժեքն այն գինն է, որը բազմակողմանի գնահատումից հետո արտահայտում է արժեթղթի առավել ճշգրիտ իրական գինը: Ընթացիկ շուկայական արժեքը որոշելիս պետք է հաշվի առնել արժեթղթի գնի փոփոխությունը ընթացիկ և նախորդ առևտրային նստաշրջաններում, արժեթղթի գնի տատանողականությունը, ընդհանուր առմամբ նմանատիպ արժեթղթերի գների տատանումները,

անհրաժեշտության դեպքում նաև այլ պայմաններ, որոնք թույլ կտան որոշել ճշգրիտ ընթացիկ շուկայական գինը:

- 11) Տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում չբավարարված հայտերը չեղյալ են համարվում և հետառևտրային նստաշրջանում չեն ընդգրկվում համապատասխան Հերթերում:
- 12) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացվող հայտում նշվում են դրա բավարարման հետևյալ էական պայմանները՝
  - ա) կորպորատիվ արժեթղթի հապավումը,
  - բ) հայտի տեսակը՝ գնման կամ վաճառքի,
  - գ) լոտերի քանակը,
  - դ) հայտի բավարարման ժամանակային պայմանը՝ պահել հերթում կամ հանել մնացորդը:
- 13) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացվող բոլոր հայտերը մասնակի բավարարմամբ, անմիջապես ակտիվացվող և լիմիտային հայտեր են, որոնցում նշվող գինը հավասար է տվյալ դասի կորպորատիվ արժեթղթերով տվյալ հետառևտրային նստաշրջանին նախորդած առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված բոլոր գործարքների միջին կշռված գնին:
- 14) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված՝ նույն դասի կորպորատիվ արժեթղթերի գնման և վաճառքի հայտերն ընդգրկվում են երկու առանձին Հերթերում՝ ըստ առևտրային համակարգում դրանց գրանցման ժամանակային առաջնահերթության:
- 15) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրվող ցանկացած հայտին Հերթում հանդիպակաց հայտի (հայտերի) առկայության դեպքում առևտրային համակարգում գրանցվում է առուվաճառքի գործարքի (գործարքների) կնքում:
- 16) Եթե հետառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացված հայտն առևտրային համակարգ մուտքագրվելու պահին Հերթում առկա հանդիպակաց բոլոր հայտերով բավարարվելուց (գործարքների կնքումից) հետո այնուամենայնիվ բավարարվում է մասամբ, ապա մնացորդը (հայտի չբավարարված մասը) ընդգրկվում է Հերթում սույն գլխի 16) կետում նշված կարգով կամ չի ընդգրկվում Հերթում՝ կախված հայտի բավարարման ժամանակային պայմանից:
- 17) Եթե հետառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացվող հայտին հանդիպակաց հայտեր Հերթում չկան, ապա այն ընդգրկվում է Հերթում սույն գլխի 16) կետում նշված կարգով կամ չի ընդգրկվում Հերթում՝ կախված հայտի բավարարման ժամանակային պայմանից:
- 18) Տվյալ հետառևտրային նստաշրջանի ընթացքում չբավարարված հայտերը չեղյալ են համարվում և հաջորդ առևտրային նստաշրջանում չեն ընդգրկվում համապատասխան Հերթերում:

### **Գլուխ 3. Սպրեդ**

- 1) Նախաառևտրային նստաշրջանի ընթացքում, ինչպես նաև առևտրային նստաշրջանի ընթացքում երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով կորպորատիվ արժեթղթերով կազմակերպվող առևտրի համար սպրեդը լավագույն հայտի գնի նկատմամբ սահմանվում է առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ պահին հայտերի համապատասխան հերթում ընդգրկված վաճառքի (գնման) լավագույն գնի  $\pm 10$  տոկոսը, ընդ որում՝ առևտրային համակարգում չեն գրանցվում գնման այն հայտերը, որոնցում նշված մեկ լոտի գինը տվյալ պահին առևտրային համակարգում գրանցված գնման

լավագույն գնի համեմատ պակաս է 10-ից ավելի տոկոսով կամ վաճառքի լավագույն գնի համեմատ ավել է 10-ից ավելի տոկոսով:

- 2) Նախաառևտրային նստաշրջանի ընթացքում, ինչպես նաև առևտրային նստաշրջանի ընթացքում երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով ցուցակված բաժնետոմսերով կազմակերպվող առևտրի համար սպրեդը Հաշվարկային գնի նկատմամբ սահմանվում է Հաշվարկային գնի  $\pm 15$  տոկոսը, ընդ որում՝ առևտրային համակարգում չեն գրանցվում այն հայտերը, որոնցում նշված մեկ լոտի գինը Հաշվարկային գնի համեմատ ավել կամ պակաս է 15-ից ավելի տոկոսով:
- 3) Հասցեական և ռեպո գործարքների դեպքում կորպորատիվ պարտատոմսերով կազմակերպվող առևտրի համար սպրեդը լավագույն հայտի գնի նկատմամբ սահմանվում է տվյալ պահին երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով տվյալ ֆինանսական գործիքով ներկայացված լավագույն հայտերի գների  $\pm 10$  տոկոսը, ընդ որում՝ առևտրային համակարգում չեն գրանցվում այն հասցեական և ռեպո առաջարկները, որոնցում նշված մեկ լոտի գինը տվյալ պահին առևտրային համակարգում գրանցված գնման (վաճառքի) լավագույն գնի համեմատ պակաս (ավել) է 10-ից ավելի տոկոսով:

#### **Գլուխ 4. Կորպորատիվ արժեթղթերով կնքված գործարքների կատարումը**

- 1) Կորպորատիվ արժեթղթերով առևտրային համակարգում կնքված գործարքների արդյունքում ծագած՝ փոխադարձ պարտավորությունների և պահանջների որոշումը, հաշվանցումը, վճարահաշվարկային փաստաթղթերի պատրաստումն ու վերջնահաշվարկի կատարումն իրականացվում է գործարքի կնքման օրը՝ Օպերատորի և Դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով:
- 2) Կորպորատիվ արժեթղթերի հետառևտրային նստաշրջանի ավարտից հետո Օպերատորի և Դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրին համապատասխան Օպերատորը Դեպոզիտարիային է փոխանցում կնքված գործարքների վերաբերյալ տեղեկությունները՝ արտարժույթով արտահայտված կորպորատիվ պարտատոմսերի դեպքում նշելով այն արժույթը, որով պետք է իրականացվի կնքված գործարքների վերջնահաշվարկը: Ստացված տվյալների հիման վրա Դեպոզիտարիան իր կանոններով սահմանված կարգով իրականացնում է կնքված գործարքների վերջնահաշվարկը:
- 3) Շուկայի մասնակիցները, որոնց կազմում կամ անունից հանդես են գալիս գործարքի կողմ հանդիսացող առևտրի մասնակիցները, պարտավոր են Օպերատորին վճարել Օպերատորի «Սակագների մասին կանոններով» սահմանված համապատասխան միջնորդավճարները:

#### **Գլուխ 5. Կանոններում փոփոխությունները և լրացումները**

- 1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով: